

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Տարածքային կառավարումը Երևանում

1. Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:

2. Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել ~~գործադիր իշխանության հանրապետական պետական կառավարման համակարգի~~ այլ մարմինների:

3. Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

Հոդված 65. Քաղաքապետի հարաբերությունները ~~գործադիր իշխանության հանրապետական~~ պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ

1. Քաղաքապետը ~~գործադիր իշխանության հանրապետական~~ պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններում՝

1) առաջարկություններ է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող Երևանին առնչվող հարցերի վերաբերյալ.

2) ~~գործադիր իշխանության~~ պետական կառավարման համակարգի Երևանի տարածքային մարմինների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հրավիրում է մասնակիցների ուշադրությունը Երևանին առնչվող խնդիրների վրա.

3) Երևանի տարածքում ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ինչպես նաև հողազավթումների, ապօրինի ծառահատման, որսագողության և ապօրինի ձկնորսության դեպքերի կանխման և արգելման հետ կապված՝ կարող է դիմել ոստիկանություն՝ համապատասխան աջակցություն ստանալու համար.

4) քաղաքապետը ոստիկանությանը տեղեկացնում է Երևանում կազմակերպվող միջոցառումների (ներառյալ՝ հավաքների և հանրային միջոցառումների) վերաբերյալ, որի պարագայում ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ այդ միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանելու, ինչպես նաև Երևանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով:

5) քաղաքապետն իրավունք ունի ~~հանրապետական—գործադիր—պետական կառավարման համակարգի~~ մարմին ներկայացնելու գրավոր, փաստարկված առաջարկություն՝ վերջինիս տարածքային ծառայության գործունեության վերաբերյալ:

Հոդված 87. Վարչական շրջանի ղեկավարին ներկայացվող պահանջները

1. Վարչական շրջանի ղեկավար կարող է նշանակվել 25 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

2. Վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը ~~հայեցողական—~~համայնքային վարչական պաշտոն է:

Հոդված 102. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները)

1. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները) իրականացնում է (են) վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն (իրենց) վերապահված լիազորությունները:

2. Վարչական շրջանի ղեկավարի բացակայության ժամանակ վարչական շրջանի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) իրականացնում է վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները:

Վարչական շրջանի ղեկավարի կողմից ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու անհնարինության դեպքում վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում քաղաքապետը:

3. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի (տեղակալների) պաշտոնը ~~հայեցողական—~~համայնքային վարչական պաշտոն է:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: